ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 68–Ա

ՄԱՐՈՒՍՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ԷՄԻՆ ՄԱԴՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 238/098 և 238/082 տնակներում բռնկված հրդեհի պատճառով այրվել են նշված տնակները իրենց ամբողջ գույքով: Թադևոսյանների և Մադոյանների ընտանիքները հայտնվել են սոցիալապես ծանր անելանելի վիճակում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով Էմին Մադոյանի և Մարուսյա Թադևոսյանի ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 27-ին NN 4615, 4616 թվագրմամբ), ինչպես նաև այդ դիմումների համաձայն Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ներկայացրած եզրակացությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել դրամական օգնություն հրդեհից այրված ժամանակավոր տնակներում բնակվող անօթևան մնացած, սոցիալապես ծանր պայմաններում հայտնված ներքոգրյալ ընտանիքներին՝

1) Էմին Մադոյանի ընտանիքին՝ 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,

2)Մարուսյա Թադևոսյանի ընտանիքին՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի